Զ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 26 ՓԵՏՐՎԱՐ 1903 — Թիւ 496

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՐ ՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ, վերջին երեսի համար 20 սանթիմ։ Երեսին առեալ անգամներու համար 20 0/0 զեղչ կըլայ։

Վճարման համար ձեւոք 10 սանթիմ

Նամակ եւ դրամ դրկել խմբագրութեան հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեւոք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեւոք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՈՎ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՍՈՒԹԻՆ ՄԷՋ

Վ. Մ-ԻՆ.

Լիրան կուրծքին, խոր անձաւի
մութին մէջ՝
Նստած անքուն գիշերն ի բուն կը
խոկայ,
Անձնանուէր հայ գործիչն է, որ
անվերջ
Հայուն վիշտով կը տառապի անվրդով։

Կը սրլանայ մտքով հեռո՛ւն ու
հեռուն,
Կը սարսռայ արհաւիրքի տեսիլքէն՝
Աւեր ու քանդ, ամայի հայ գիւղերուն,
Ուր բու, գազան մահուան սև գոյժ
մը կ'երգեն։

Ահա՛ հուրի մատնուած գիւղ մը մն
ալ, ուր
Ոճիր-քիւրտը քարշ տայ հայ հարս
մը նըւազ։
Հսկայ բոցեր կը ճայնակցին՝ մը։
տալուր
Կոծ ու լացին հայ որբերուն անսրտաղ։

Ահա՛ գետեր, որ կը հոսին ա՛լ
կարմիր՝
Դէզ դէզ փրփուր չալկած դէպի
ծով արագ։
Կը թաւալեն ժայռերն ի վար բարկալիր
Հառաչանքը հայ աշխարհին աւերակ։

Ու կը դողա՛յ հայ գործիչը. իր հոգին
Երկինք մըն է, ուր սեւ ամպեր
կան դիզուած։
Գուցէ մի օր ճայթին անոնք մուլեգին
Կայծակներով և սարսռոյ Աստուած։

ՎԷՏԱ

ՍԻՆՇԱՏՎԱՆԳԱՒՈՐ ԶԳՏՈՒՄ

Դեռ հանգուցեալ Զաքրեանը, իր կենդանի մնացած օրերում, իր նոյնպէս հանգուցեալ թերթերի միջոցով, ռուսահայ և տաճկահայ յեղափոխականների միջեւ բաժանում էր քարոզում։

Նոյն մտքով մի քանի յօդուածներ ու պատկերներ երեւացին և տխրահռչակ Արփիարի «Նոր—կեանք»ի մէջ։ Այդ ձգտումը ուելի որոշ կերպով վերակազմեալները այսօր արտայտում են Ամերիկայի «Ձայն սարուկների» և իրենց առաքեալների միջոցով։

Անցեալները, Սոֆիայում, պատելի Զիլթճեան բացորոշ կերպով յայտարարել էր որ, իրենք տրամադիր են ռուսահայ յեղափոխականներին չեզոքացնել։ Նոյն մտքով խօսել է և Փիլիպէում։

Մեզ թւում է որ փոքր ի շատէ խելացի և հայրենասէր տաճկահայը անկարող է այդ տեսակ մի ազգակործան ձգտում ցոյց տալ, հէնց տաճկահայութեան օգուտի տեսակէտից ղեկավարվելով. որովհետեւ տաճկահայը առանց ռուսահայի գործնական աջակցութեան ոչ միայն չի փրկվի, այլ և կարող է շուտով ջնջվել։ Զը մոռնանք որ, նախ տաճկահայերը ցրուած են ապրում, երկրորդ անտեսապէս չափազանց քայքայված լինելով շարունակ գաղթում են օտար երկիրներ, երրորդ ենթակայ են սարսափելի բռնութիւնների, չորրորդ այդ վիճակը հետզհետէ աւելի պէտք է վատթարանայ։ Այնպէս որ կեանքի այս պայմանները երկու երեք տասնեակ տարում տաճկահայի թիւը ղէրօի պէտք է հասցնեն, ու նրա ազատական ձգտումների փոքրիկ պայթումները ոչ միայն դրական հետեւանք չեն ունենայ, այլ և գուցէ պատմութեան մէջ չը յիշվեն։

**

Ռուսահայի գոյութիւնն էլ պէտք է վտանգվի. բայց նա աւելի յոյս պէտք է ունենայ կորսուելուց խուսափելու և ապագայ սահմանադրական Ռուսաստանի մէջ իրրեւ առանձին ցեղ իր պատմական դերը կատարելու Կովկասում։ Ահա թէ ինչու։

Կովկասում ապրում են միասին միլիոն ու կէս հայեր, աւելի թոյլ տեղական ցեղերի հետ։ Այնտեղ այնքան ռուս չի կարող լինել, որ կարճ ժամանակում կարողանայ հայ ցեղին իր մէջ լուծել։ Ռուսահայերը աւելի բարեկեցիկ են, աւելի արագ են աճում և օտար երկիրներ մեծ քանակութեամբ գաղթելու ձգտումներ չունին։ Յետոյ թրքական հարստահարութիւնը և բռնութիւնները չը կան։ Այո կայ բռնութիւն. բայց այդ բռնութեանը շատ երկար ժամանակ պէտք է հայի պէս աճող և տոկուն ցեղին ջնջելու համար։ Այնպէս որ այդ տեսակ պայմաններում ռուսահայերի թիւը երկու երեք տասնեակ տարում երկու միլիոնի պէտք է հասնի։ Բացի դրանից Տաճկահայերի ազատագրութեան գործի համար զոհողութեան պատրաստ Ռուսահայերը իրենց ուժերը սմբողջովին պէտք է նուիրեն Ռուսահայի ապագան փրկելու համար։ Ու ռուսական սահմանադրութիւնը ընտրեցված միջոցին, որ անշուշտ շատ ուշանալ չէ կարող, հայը Կովկասի ամենաընտրեալ տարրը պէտք է լինի և որոշ չափով բաւականութիւն պէտք է ստանայ իր ազգային ձգտումներին։

Այս բոլորը մտածող Ռուսահայեր շատ կան. որոնք նոյնպէս քարոզում են թողնել Տաճկահայերին իրենց բախտին և ամեն ճիգ թափել Ռուսահայութիւնը պատրաստել ռուսական կայսրութեան մէջ սպասվելիք փոթորիկներին դիմագրաւելու և սահմանադրական Ռուսաստանի այլազան ցեղերի շարքում կարեւոր ու պատուաւոր տեղ գրաւելու համար։

Այնպէս որ Վերակազմեալները գալիս են մի նոր մղում տալու այն մտածումին ու գործունէութեան ձեւին, որը վերջին տարիներում սկսել են ունենալ բաւական թւով Ռուսահայ ինտելիգենտներ։

Բայց, ինչպէս վերը ասացինք, այս ձգտումը շատ վտանգաւոր է ամբողջ հայութեան համար։

Մենք մեր առջեւ ունենք հայկական խնդիր. ոչ առանձին առանձին խնդիրներ։ Եւ եթէ այսօր մեր հաւաքական ուժերը թափում ենք Տաճկահայաստանը ազատելու համար, դրա գլխաւոր պատճառը այն է, որ այստեղ հայութեան գոյութիւնը աւելի վտանգված է, փրկութիւնը ուշացածին պէս, նա անմիջապէս պէտք է ոչնչանայ։

ՎԱՐԴՕ

ՇՈՒՐՋՆԵՐՍ

Այսօր ամեն հայի ծանօթ է այն խառնաշփոթ և լարած դրութիւնը, որ տիրում է Հնչակեան «միացեալ» կենտրոնի և կամ, որ աւելի ճիշդն է, ընդհանուր հնչակեանութեան մէջ։ Բաժանումը էլի տեղի է ունենում; սակայն այնպիսի խիստ և թշնամական բնաւորութեամբ, որ միանգամ՝ ընդմիշտ փչացնում է ապագայ միութեան կամ համերաշխ գործակցութեան ամեն յոյս այդ երկու հաւաքներում։ Իրականութիւնը սպասուածից անհամեմատ մեծ չափով դառն է և ցաւալի։ Ինչպէս իրենք են ցոյց տալիս, Հնչակեան միացեալ կենտրոնը «դաւաճանների», «թրքական գործիքների», «դաւադիրների» և այլն մի խառն լէգէոն է եղել, որը իրերի ներկայ ազգնապալի դրութեան մէջ ստանձնել էր Հնչակեան յեղափոխական կուսակցութեան ղեկավարութեան ծանր և պատասխանատու գործը։ Երկու «Հնչակներից էլ պարզ երեւում է, որ նրանց գործունէութիւնը բոլորովին հեռացել է յեղափոխական հողից։ «Հնչակները զուտ ներքին խորտակիչ կռիւների օդականներ են դառել, իսկ յեղափոխական ոչ է գործ հայրենիքում՝ Հնչակեանների մտքովն սկի չի անցնում։ «Հիներիս» ասելով «նորերը» մինչեւ այժմ շահագործել են միութեան քաղցրահնչիւն անունը և շոյելով հայ ժողովրդի հոգու ամենանուրը լարերին, իրացրել են միութեան անունով հանգանակած Ամերիկայի շլացնող

տոլարների գիրուկ գումարները և գործ են ածել լոկ իրենց անհատական պէաքերին և հոգսերին։

Ցամենայն դէպս երկու կողմերն էլ դատապարտելի են իրենց ներկայ եղբայրասպան, ազգավնաս պառակտումով։ Երկու կողմերն էլ կանխապէս համոզուած էին իրենց արեւստական միութեան ներկայ վախճանին։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Իրենց կիսամեռ կուսակցութեան մահամերձ հատուածներին մի ժամանակաւոր հոսանք տալու համար, նրանք զոհեցին ամենն անկեղծ համոզմունք, ձգտում, գործի լուրջ բնաւորութիւն և շրջահայեցութիւն։ Որպէս հըմուտ խաբեբաներ, նրանք ըմբռնել էին արտասահմանեան հայ ամբոխի հոգեբանութիւնը, տըրամադրութիւնը և ոտնակոխ անելով մի արիւնաթաթախ գերի ժողովրդի ամենարիւրական իդէալը—ազատութիւնը, ամենայն անգթութեամբ շահագործեցին նրան հիմնելով այդպիսի խաղաւտ հիմերի վրայ միութիւնը, որը լոկ անունով է գոյութիւն ունեցել։ Իսկ այժմ պատկերը բացւում, ներկայանում է հայ ժողովրդի առաջ իր ամբողջ այլանդակութեամբ և անճոռնի բնաւորութեամբ։ Ի՞նչ պատկեր... վռնտուում են ոչ միայն «նորերը» իբրեւ դաւաճաններ, այլև «հիներդի» ամենակարեւոր ոյժերը իբրեւ դաւադիրներ։ Ով է մնում—չգիտենք։

Եւ ամենաարգահատելին այն է, որ սրանք գործւում են մի կենսական պահանջի շուրջը։ դա գործն է, ընթերցող, յեղափոխական գործը—մեր գոյութեան միակ պահանջը։ Մենք ասացինք թէ չգիտենք ովքեր են մնումը՝ բանդ կեդրոններում. բայց հէնց իրանց ձեռքով պարզած դրութիւնը մեզ թոյլ է տալիս ասել, թէ նրանք ոչ միայն կարող չեն մի յեղափոխական լուրջ քայլի երկրում, այլ և կարող չեն իրենց ներքին պառակտումներին, կռիւներին մի բարեյաջող վերջ տալ։

Ինչքա՞ն անխիղճ և նենգ ժըպիտ մեր տառապանքների հանդէպ, ինչքա՞ն սուղ կատակ մեր փրկարար պահանջին։ Բայց հաւատացած ենք լինելու, թէ այն անհատը կամ կազմակերպութիւնը, որ չի ըմբռնում ժողովրդի պահանջը և կամ գիտակցաբար յանդգնում է չեղվել այդ պահանջի ընդդէմ ճանապարհից, անողոք կերպով դատապարտուած է մահուան։ Հնչակեանների գոյութեան բնականօրէն մահ է սպառնում, քանի նրանք կընթանան հեռու իսկական ճանապարհից, քանի չեն ըմբռնի ներկայ ճգնաժամի պահանջը կամ անկարող են դրան՝ թէկուզ ամենափոքրիկ չափով՝ բաւարարութիւն տալ։ Մեզ տարակուսանքի է ենթարկում այն հանգամանքը, թէ սրանից յետոյ կարող ե՞ն մնալ իսկապէս անկեղծ, գործնական հնչակեանները էլ այդ մթնոլորտում, ուր տիրում է—ինչպէս իրենք են ասում—դաւաճանութիւնների, դաւադրութիւնների և դաւերի մի ք տմնելի քաոս և ուր միայն յեղափոխական անարատ գործն է մեռած։

Էմիլ Շղարշեանց

ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսը՝ արտասահմանի ամենէ հայաշատ վայրերէնմին է, 95–96ի արխնալի թուականին, գաղթականութեան հոսանքէն հոս քշուած են բաւականին մեծ թըուով հայեր։ Նոր գաղթականութիւնը խառնուելով բնիկ Եգիպտահայերուն հետ, կազմած է այսօր մի պատկառելի թիւ։ այսինքն՝ մինչեւ տաս հազարէն աւելի։ Բայց չը նայած այդ նշմարելի թիւին, Եգիպտահայութիւնը՝ այսօր արտասահմանի ամենափճաչած հայութիւնը կը ներկայացնէ։

Ոչ մի տեսակ ազգային մաքուր գործունէութիւն չէ տեսնուած Եգիպտոսէն։ Ոչ դպրոց, ոչ երիտասարդութիւն ու ոչ ազգային վարչութիւն կայ հոս։ Ազգային վարչութիւնը համարեա կազմուած է գաղերու ընդհանուր ներկայացուցիչներէն։ ազգային սնտուկը առաւելապէս ձեռք է մնացեր, իսկ գաղերու վերին ղեկավարութիւնը փաշաներու ձեռքն է։

Իսկ երիտասարդութիւնը, կարելի է անվերապահօրէն ըսել թէ՝ արտասահմանի ամենէն անբարոյական հայութիւնը կը ներկայացնէ։ պատճառը.— մամուլն է։

Անկարելի է տեսնել մամուլի այնքան սոորնացում, որքան եգիպտական հայ մամուլը։ մամուլը երբէք իւր մաքրագործումի դերը չէ կատարած ատ, երբէ՛ք իր վսեմ կոչումին չէ ծառայած... փաշաներու կամքին ծախուած ու կախուած է սկիզբէն ցարդ։ մամուլը երբէք քաջութիւն չէ ունեցած պատուելու կեղծիքի ընդհանուր դիմակը։ եւ ցոյց տուած անկեղծութեան ուղին։ երիտասարդութիւնը՝ ոչինչ չէ գրուած հրահանգիչ դէպի բարին, առաքինին ու վսեմը եգիպտահայ թերթի սիւնակներու մէջ եւ նա քշուած է միջավայրի տիրող ազդեցութենէն, այսինքն դէպի անբարոյականացում... անզգալաբար ու յեղակարծօրէն ինկած է երիտասարդութիւնը անղեկավար լինելուն պատճառով։

Արտասահմանի ամենանուազ հայութեան հատուածներէն իսկ կարելի է օրինակներ թուել այն տեսակ գեղեցիկ ձեռնարկներու որ՝ մարդ կը հիանայ ու ամօթ կըզգայ չափելու քանակը համեմատելով այժմիքը։ Պուլկարիոյ եւ Ամերիկայի մեր թերթերուն նայելով, հոն ազգային կեանքը եռ ու զեռուն է, յեղափոխական ըրօպականդը տաք, հայրենասիրական զգացումը թունդ., հոն եկեղեցիներու մէջ, կամ հրապարակի վրայ՝ միշտ նահատակ քաջերու յիշատակին յարգանք կը մատուցուի ու հայրենիքի փոթորկոտ ծոցին մէջ կռուող քաջերուն օգնութեան փութացում կը տեսնուի... Իսկ Փարաւոնի այս աշխարը.—ոչ շարժում կերեւի ոչ ալ ազգային զգացում հայ կեանքով։ թէ ի՞նչ եղած է պատճառը ներկայ անբարոյականացումին, արդէն վերեւ մասամբ ըսի, այնուամենայնիւ պատկերացնելու լիովին Եգիպտահայոց ներկայ ընդհանուր բարոյական կեանքը, օգտակար կը տեսնեմ մի քանի գծեր եւս աւելցնել։

* * *

Այս տեղ հայկական կեանքը օյէցօր այլասերուելու վրայ է։ Իսկ ազգային մթնոլորտը վերին աստիճան ապականուած է։ Երբ հայկական կեանք կամ ազգային մթնոլորտ կըսեմ, մասնաւորապէս կուզեմ գաղթական հայութիւնը, որովհետեւ բնիկ, Եգիպտահայը մեր ազգային մաքուր նկարագրին յատկանիշներն՝ Նեղոսին յորձանքին յանձնած է ողորմած հոգի Նուպար աղան հայր ունեցած օրէն ի վեր... ու գաղթականներու այսքան վաղ այլասերումն պատճառները մասնաւորապէս հետեւեալ կերպով կը բացատրուի։

Գաղթական հայը հեռանալով հայրենի տունէն դէպի այս անծանօթ միջավայրը բնականօրէն ուզած է աւելի մօտ ապրիլ իր կրօնակցին, համարիւն եղբօրը՝ այսինքն՝ բնիկ հայուն հետ, եւ արդէն չարիքին արմատական պատճառը այդ եղած է։ որովհետեւ բնիկ հայերու մէջ գտնել մի բարոյական անձնաւորութիւն, մի համեստ նկարագիր։ դա բացարձակ հրաշք կրնայ համարուիլ... ու գաղթական հայը՝ միամտօրէն տեսնելով ու հետեւելով անոնց, տակաւ տակաւ մոռնալ սկսած է ամբողջական ու յատկանշական մաքրութիւնը մեր ցեղին նկարագրին...

Գաղթական հայը զուրկ մնալով բոլոր բարոյական հրահանգիչ դասերէ, երբ կը տեսնէ ու կը լսէ որ Նուպարին աղջիկը իտալացի տարփածուի մը սիրոյն հայ եկեղեցու օրհնած հարազատ ամուսնութիւնը կը՝ լքէ... որ Նուպարին աղան Պողոսը՝ իր մէկ որդեզրած հայ աղջիկը չենք գիտեր ինչ իրաւունքով Ֆրանսացու մը հետ կամուսնացնէ... երբ ինքը այդ մեռնողին զառամած տըղան՝ կիսամերկ օտարուհոյն հետ ժամանցի վավաշոտ բոպէներ կը ցուցադրէ... երբ մինչ այնինչ հայ փաշային կամ պէկին տղան կամ աղջիկը շաբաթներով հայրենի տունէն կ'անհետին ու կը վերադառնան, երբ այդ ամենը կըսենք գաղթական հայը կը լսէ ու կը տեսնէ, տիրօրէն կ'ազդուի եւ կը չքանայ...

Գաղթական հայը երբ կը տեսնէ որ իր հայրենակից պոլսեցին առանց աշխատելու ապրելու միջոց կը գտնէ... երբ կը տեսնէ երկու պոլսեցի հայ աղջկանց ասակեցուիլը եգիպտացի իշխանազուների ձեռքով, իրենց կաւատ եղբայրներու ներկայութեամբ... ու երբ առաջնորդ, տէրտէր, վարդապետ, վարժապետ, վարժուհի, ի ծաղումն արեգական կորնչին աստեղք»ի մեծ փիլիսոփայութեան հետեւեալ են, շատ բնական է որ երեկուան արաիչիով հայը՝ վաղուան անբարոյական լէօնիսաը ըլլալու խորին ցանկութիւնը պիտի ունենայ... անգիտակցօրէն շատ բնական է որ երեկուայ ամօթխած գաւառացի հայուհին՝ ողբալի ցանկութիւնը պիտի ունենայ նմանելու իր պոլսեցի ազգակցուհոյն որ ժանեակներու թաւուտին մէջ թաղուած, Շարա—Ապասէն մինչեւ Պասր-էլ-Նիլ օրական միքանի նազանք ունենայ... ու իր սեթունաւորիչ աչքերով քովնտի նայուածքով մը վաւաշոտ եգիպտացու մը ենհարաք-սատ եա՛ պէյ ըսելու միջոցը փնտռէ... ահա՛ այս բոլոր գերակշիռ պատճառներ են որ գաղթական հայը եգիպտոսի մէջ, վաղ կամ անագան պիտի փճանայ... թէ ի՞նչ պէտք է չենել որ չարիքը իր վերջին հարուածը խնայէ։

Այդ խոշոր հարցին մենք երկու կէտով պատասխանել կը մտածենք։

1. Մամուլը իր մեծ կոչումին ծառայեցնել։ 2. յեղափոխական այժմեան զօրեղ կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը վերջնականօրէն մուտք տիրելու եգիպտահայ բարոյական հրապարակին։ Դաշնակցութիւնը այժմ քան երբէք պէտք է իր գործունէութեան ծաւալը եղածէն աւելի լայնցնէ Եգիպտոսի մէջ, որովհետեւ ալ Հնչակեաններու դիմակը վերջնականօրէն պատռուած է, եւ ժողովուրդը որ թէեւ ուշ, բայց վերջապէս ճանչցած է ճշմարիտն... Մենք կը մտածենք որ այս երկու միջոցները բաւական են գէթ առժամապէս գաղթական հայուն փրկիլու անկումի վիհէն, որմէ ծնած ողբալի չարիքը Հայրենիքինն է։

Արմիլ-Արծրուի

Վերին-Եգիպտոս

ԲՈՆԹԱՆՆԱՑԻ ԱԶԳԵՑԻՆ ԿԵԱՆՔԷՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

—o.—

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ՑԵՑՂ

—o—

Բ.

Եւ 1901–ի սկիզբէն, ուր Դատաւորեան քահանայ ընդհանուր ժողովէն իր անձնական հանգիստն ու շահը պաշտպանող մարմին մը պահանջած էր, մինչեւ 1902–ի առաջին ամիսները երբ ընտրուեցաւ արդի Թաղ. խորհրդոյ պատ. մարմինը, այն գերազանցապէս նպաստաւոր ժամանակամիջոցը եղաւ, որ Դատաւորեան քահանային ընձեռեց /ը իտէալ բարձրութեան հասնիլ։

Հակառակ չլսխատաւոր մը ու յիմարութեան աստիճանի հասնող դիւրագրգիռ բնաւորութեան մը տէր ըլլալուն՝ կրօնի ուսուցիչ անուանուեցաւ Հաչկաշեան վարժարանի մէջ։ չարաչար գործածելով ու երես առնելով նոյն ժամանակի պատ. մարմ՝ այն մեղ ու բարի տրամադրութիւններէն՝ եկեղեցական աւանդական սովորութիւններն իսկ՝ իր չահերու տրամադրութեանց հպատակեցուց, մինչեւ որ ժողովրդեան քաղքին տեղի տուաւ։ բոլորովին գաղրեցուց նորէն՝ այն ասորեայ սուաւսեան ու երեկոյեան ժամերգութիւնները, զորս կատարել հարկադրած էր նախորդ մարմինը՝ կրնայ երեւակայուիլ թէ՝ երբ ոգի մը սանձարձակ թողուի։ ուր կը հասնի անոր յատկնոտութիւնը։ ու Դատաւորեան մեծ բարձրաստիճան կղերականի մը հովեր սկսաւ տալ։ ինքը ա՛լ չէր պատկաներ քաղաքիս հայ հասարակութեան ամէն մէկ դասակարգին։ աղքատը չէր պատկաներ

իրեն և մրթէկը վայելե՛ր իրեն այցելութիւն տալ հայ պանդուխտին, որուն դէմքը ու զգեստը ածուխի փոշիով մրկուած էր... Թէև ո՛չ մէկը իր մտքէն չէր անցներ, ու զուցէ քաղաքիս հայ բարեկեցիկ դասակարգը ու պաշտօնական մարմինները, ամեն աեղէ տեսնելի, ամենէն տաք սիրտը ունեցած են հանդէպ հայ աշխատաւոր ու պանդուխտ դասակարգին, սակայն Դատաւորեան քահանայ ազգային դասակարգ մը չանցաստեղծել։ Պանդուխտներու հանդէպ իր վարած ընթացքը ատելի ըրին զինքը, որոնք օրէ օր սկսան իրենց յանախումը դադրեցնել իրենց միակ մխիթարութեան կեդրոնը եղող եկեղեցիէն։

Ու Դատաւորեան քահանայ ցնծումով մը ողջունեց արդի թաղական խորհրդոյ ընտրութիւնը, թէև անիծեց ու մինչև ցմահ պիտի անիծէ՝ այն օրը յորում կատարուեցաւ այդ ընտրութիւնը։

Նորընտիր մարմինը կազմուած էր խումբ մը ուսեալ ու լուսամիտ երիտասարդներէ, որոնց միութիւնը կուգար կը բարեխառնէր ազգային բազմամեայ փորձառութիւններով ու լայն հայեցողութիւններով օժտուած ուղեղ մը։ Սոյն մարմնոյն ամբողջ հայեցողութեան կէտը եղաւ նոր սերունդին դաստիարակութիւնը։ Հայկազեան վարժարանը՝ կրթական նախարարութեան պահանջքին համաձայն, ելմտացոյցի 2-3 հազար ֆրանքի յաւելում մը ունեցած էր ու հրաժարեալ մարմինը 1500 ֆրանքի մօտ պարտք մը կը թողուր պաշտօնէից։ ու երեւակայել թէ, տարեկան աստներկու հազար ֆրանքի ելմտացոյց մը պէտք է գոցել միմիայն քաղաքիս հայ հասարակութեան ղանազան նուիրատուութեամբը։

Դատաւորեան քահանայ, առաջին առթիւ, երբ տեսաւ այն յայտարարութիւնը, զոր թաղ. խորհուրդը ընած էր՝ անոր մէջ նշանակելով ազգայնոց վճարելիք տուրքերու օրակն ու քանակութիւնը, զայն իր շահուց հակառակ տեսնելով, սկսաւ ազգայնոց մէջ պատիլ ու զայն մեռեալ տոի վերածել չանալ։ Խորհուրդը նկատի առնելով քաղաքիս հայ բնակչութեան օրէ օր բազմանալը, ամուրիներէ ու պանդուխտներէ զատ՝ 150 ընտանիքէ գոյացած նուիրատուութիւնը բաւ ու. ապահովուած համարեց Դատաւոր քահանայի ապրուստին համար և ինչպէս կրնար բաւ չի համարել, երբ իր պաշտօնավարութեան առաջին տարին (սկ. Դատաւորեան սեղանաւորութեան սկսած էր. ուստի, դադրեցուց անոր տնականը, ազգային անտուկը աւելորդ ծախքէ մը ազատելու։ Ուսուցչական մարմնոյն ամսականները կանոնաւորելու համար։ Ու այդ վայրկեանէն, այս ընչաքաղց կրօնականը, հակառակ իրեն եղած բարոյական աջակցութեան ու մասնաւոր նուէրի մը խոստումին, յարուցաւ թաղականութեան դէմ, և ամենասարսռելի մէջոցներու դիմեց զայն պառակտելու ու տապալելու համար։

Վտարուած՝ բանիմաց ու ողջախոհ ազգայիններու շրջանակէն, կարգ մը քառակուսի գլուխներ զատ, տափակ մարդիկներ, որոնք սպուշ մտածումով մը՝ Դատաւորեանի միացան, խորհուրդը տապալելու յուսակնատ տոգորումներով։ Դատաւորեան քահանայ լաւ գիտէր քաղաքիս հայ հասարակութեան ամբողջ հայեցողութեան միակ կէտը. վարժարանը, ուստի. ինք՝ որ ալ վարուած էր անկէ, սկսաւ անոր բարոյական պատոյն հետ խաղալ. Ռօսէնեան ճարպիկ դարձուածքով մը, որպէսզի վարիչ մարմնոյն դէմ բողոքի աղաղակ մը բարձրացնէ. բարձրաձայն ուսուցչութիւնը, ու զատ բաղդ սխնդիր մը մի ոմն Գառնիկ Քիւրեան ու Ջլաստաւոր գեղջուկ մը՝ Իգնատիոս անուն, որոնք իրենց արբանեակներով հրապարակ նետեցին Դատաւորեան քահանայի այն սեւ մտածումը՝ որ կը տարածուէր վարժարանի բարոյական պատոյն և ուսուցչի մը անուան շուրջը։ Քօնսթանցայի հայ հասարակութիւնը, չորս տարիներէ ի վեր, քաջ ճանչցած ըլլալով իր պաշտօնեայ ուսուցչին հոգեկան, բարոյական ու մտաւորական ամէն մէկ կարողութիւնները, խուլ զայրոյթով մը արհամարհեց այդ բամբասանքը, կատակի ձեւով մէջ նետուած, զոր պաշտօնական հարցաքննութիւնը ամբողջ դաւը վեր հանեց՝ իր նպատակովը միասին։

Ազգային կանոնաւոր կազմակերպութեան թշնամի այս ապիրատ կրօնականը՝ հոսկառակ իրեն տրուած պաշտօնական հրամաններուն, ո՛չ միայն առանց հրամանի սկսաւ կրօնական արարողութիւններ կատարել ազգայնոց, ուրկէ կը տուժէր ազգային Սնտուկը, այլ և քաջալերութիւնը տուաւ Սթէնքի հովիւ Խորէն քահանայ Մուրատեանի, որպէսզի թաղ. խորհրդոյ կողմանէ արգիլուած հանգանակութիւնը կատարէ քաղաքիս ազգայնոց մէջ։

Ծոլմա-Իշխան

(Շարունակելի)

20 փետրուար 1903

Քօնսթանցա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Համպուրկ 22 մարս 1903

Կայ որոշ դասակարգի և կուսակցութեան վերաբերող մամուլ մը, որուն եթէ հարցուի թէ՝ ոյո՞ւ ծառայել կուզէ՞ արդարութեան, ճշմարտութեան թէ Մամոնին. պատասխանը ապշեցուցիչ կըլլայ և եղած է.— «Թիւրքին»։ Այս ուղղութեան հետեւող թերթերը առհասարակ ազգային ազատական (նասիոնալ-լիպերալ) կանուանին. երբեմն սակայն կատաղի պահպանողականներէն քիչ կը տարբերին. մէջերնին ամեն տեսակ սկզբունքի մարդիկ կան։ Ասոնք կարծես տեսակ մը մրցում կընեն հայկական գործերու վրայ միշտ և կարելի եղածին չափ աննպաստ խօսելու կամ գրելու։ Մինչեւ այսօր ալ նշմարելի փոփոխութիւն մը տեղի չունենալը մամլոյ այս մասին մէջ, իրեն վերագրուած թիւրքասիրութիւնը լեռվին կարդարացնէ. Թիւրքերը կը սիրեն թէ թրքական սկիները, որոշ քննադատութեան մը չկրնար ենթարկուիլ. թերեւս երկուքը միասին։ Սովորութեան համեմատ երբ լուր մը պէտք է հրատարակեն կամ ակամայ երկտող մը նուիրեն հայկական դատին, զրեթէ միշտ «եղեր»ով կը խօսին։ Օր. հմր. Մուշի նահանգին մէջ այսքան հոգի սպաննուած են եղեր! կամ այս ինչ հայկական գիւղը թալանուած ու «հրդեհուած է եղեր». Պէրլինի դիշնադրին 61 րդ. յօդուածով հայերուն բարենորոգումներ խոստացուած են «եղեր»։ Խայտառակութեան կը հասնի «եղեր»ներու շարքը. որ ԴԻՏՍԻՈՐ ԱՆԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ դրօշմը կը կրէ և մեզի զգուանք միայն կրնայ ազդել հասարակութեան միտքը պղտորող մամուլին հանդէպ։

Օրմանեանի օլինպազութիւններէն վերջ, երբ կը գտնուի սրատես մէկը՝ վերջ տալու գեանքի մը, որուն համար հայ ժողովուրդին սրբութիւնները անձնական քմահաճ կենսավարութեան մը տարակայ եղած էին, «Բէօլնիչէ Ցայթուն»ի չերկմտիր դէն «Ֆանատիկոս» անուանելու Ֆանատիկոս հայութեան տրի և հարազատ զաւակներէն մին։

Մարդ տարօրինակ, պժգալի ճաշակ ունենալու է, գրչի սանձարձակութիւն մը համարձակելու թէ՝ թիւրքերը Արեւելքի «ճէնթըլմէններն»են—իմա՛ ի՞նչ ճէնթըլմէններ. Սուլթանէն մինչև ամենայետին գիւղացի Ալին ու Ահմէտը—ինչպէս կը կարծէ առաջնակարգ թերթի մը քաղաքական բաժնի աշխատակիցը, որ խրմբագրատան փառահեղ և հանդարտ սալոնին մէջ բազմած հայկական եւ. սարսափներն ալ չափազանցուած կը նկատէ. Իսկապէս բացի «իրենց թրքասիրութենէն, սարսափներու և հայերու մասին բան մը չափազանցուած չէ.

Ձայն բարձրացուց Պէրնշթայն, ասոր կարձագանգէ Պրանտէս. բայց ժողովներու մէջ լսուած խօսքերը, որքան ալ ազդու արտասանուած ըլլան և որքան ալ հեղինակաւոր անձեր ըլլան զանոնք հնչեցնողները. վաղանցուկ տպաւորութիւն մը միայն կը թողուն ունկնդիրներու վրայ, ան ալ երկրի մը կամ քաղաքի մը մէջ ուր կեանքը գօրաւոր կերպով կեռայ. Ցորքան մամուլը բան գործ չընէ հայ դատի պաշտպանութիւնը, հասարակական կարծիք կազմելու տարակուսելի օգուտն ունեցած մեր ակնկալութիւնները չպիտի պակուին։

Ի՞նչ հոգս... Կրէտէն ազատեցաւ առանց գերման կառավարութեան, հակառակ անոր կամքին և հակառակ այն անզուգական զրպարտութիւններուն, զորս գերմանական թերթեր քաջարի Կրէտացիներու գլխին տեղացին։

ԳԱՌԱՌՑԻ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՀԱՑՐ ԵՒ ՑԱՐԳԵԼԻ ՏԻԱՐՔ(*)

Երկու երեք բառերով խօսակցութիւն մը պիտի ընեմ ձեզ, մայրեր ու հայրեր։ Այսօրուան տօնը ամէնքնիս ալ գիտենք ինչ տօն ըլլալը։ Վարդանանց գօրավարաց նահատակութիւն կտենք եւ կուրախանանք թէ այսօր Վարդաներուն տօնն է։ Արդէն ամէնքնիս գիտենք Վարդանդօրավարի պատմութիւնը. հարկ չի՝ կայ պատմել, միայն սա պիտի ըսեմ ձեզ հայրեր ու մայրեր թէ՝, Վարդան զօրավարը պատերազմեցաւ կուռեցաւ, իր կրօնքը եւ իր ազգութիւնը պահպանելու եւ իր պարտականութիւնը կատարելու համար։

Այժմ մենք ի՞նչ պէտք է ընենք ո՛վ երիտասարդութիւն. մենք ալ պէտք է Վարդանանց նման պատերազմինք, կռուինք. եւ մեր ազգութիւն պատենք թուրքին ձեռքէն։ Վարդանանց ժամանակ կրօնքի պատերազմ կար, բայց հիմայ ազգի մը պատերազմ մը կայ, Հայաստան մը կայ, Հայաստան որ գիշեր ցորեկ մեր մտքէն չելլեր։ Մեր դպրոցին մէջ մեր սիրելի ուսուցիչները հայրենասիրական խրատներ տուած են. այդ հայրենասիրական խրատներն էին. սիրեցէք դպրոց, սիրեցէք ազգ, կրօնք եւ սուրբ յեղափոխութիւն. ամենուս պարտքն է ատ։ Հիմա մենք ձգած ենք դպրոցը, պիտի մո՞ռնանք այն խրատները որ մեր սիրելի ուսուցիչները դրած էին մեր սրտին մէջ. պէտք չէ մոռնանք այլ պէտք է կատարենք։

Այս սուրբ գործին համար ընկերութիւն մը հաստատած ենք Սլիվէնի մէջ վասպուրական խմբի անունով։ երեք ամիս կըլլայ որ կը շարունակենք։ յաստէ տանելու, բայց կամաչենք երթալ մեծագաս կարգերուն հրաւիրել մեր խմբին։ Բայց ով կուզէ մասնակցիլ մեր խմբին անաւասիկ սեղրակը հոս է, թող մասնակցի. բայց ասկէց վերջը պիտի երթանք մեծագաս կարգերուն հրաւիրել մեր խմբին։ Մենք մեծ գումար մը չենք ուզեր. ամենափոքր, ամենափոքր 10նոցը, 20նոցը մեզի ընդունելի է։ Այսպէս կարող ենք մենք մեր խեղճ ազգին օգնել եւ մեր պարտականութիւնները կատարել։

Թող մեր անուններն ալ յիշուին լրագիրներուն մէջ. Թող չըսեն Սլիվէնի դպրոցը ետ մնացած է. Թող չըսեն Սլիվէնի երիտասարդութիւնը մեռած է. Թող չըսեն Սլիվէնի ժողովուրդը ազգասէր չէ. Թող ուրախանան մեր հայրեր ու մայրեր, Թող բարձրանայ Սլիվէնի ժողովուրդը։

Մենք չենք կրնար երթալ պատերազմիլ Թուրքին դիմաց. բայց մեզի համար պատերազմողներ կան հոն, միայն կը պռռան, դրամ. դրամ, զէնք. զէնք. դրամով զէնքով կռուիլ Հայաստան. սովամահ կըլլան կը չարչարուին հոգով ու մարմնով. կը նետուին բռնաբարող Թուրքին առջեւ կը պատերազմին։ Մինչ անոնք մեզի նման մարդ չե՞ն. մեզի նման հայրեր մայրեր չունի՞ն. մեզի նման ազատ կեանք վարել չե՞ն ուզեր։ Բայց չէ անոնք իրենց պարտականութիւն կը կատարեն։ Օր մըն ալ այն խեղճ ազգը, այն ցաւալի ազգը ազատ կեանք պիտի վայելէ պուլկար ազգին նման. եւ մինչ մեր տասնոցը չարժե՞ր, անոնց համար կը ինայենք։ Ու չենք ուզեր տալ։ Տեսէք երեք հարիւր հազար նահատակներ եղան Հայաստանի մէջ. անոցմէ զատ գացին Պեսրոսներ, Արամներ, Սերոբներ եւ այլն եւ այլն։ Եւ մինչ հիմա պէտք է լռենք, պէտք չէ՛ լռենք։ այլ պէտք է անոնց վրէժը առնենք։

Օրինակներ առնենք. Մակեդոնացիներէն, կը տեսնաք այս ազգը որչափ կաչխատի իրեն յեղափոխութիւնը յառաջ տանելու, ստակ կուտան, հագուստ կուտան զէնքարկ կուտան, արեան կուտան, և այսպէս իրենց յեղափոխութիւնը յառաջ կը տանին։ Մեր, Եւրոպայի հայերը, հազարներով կուտան. բայց մենք ալ մեր տասնոցները, մեր քսաններոցները եթէ որ

(*) Ծ. Ի. Այս պատանին այս ճառը արտասաներ է Վարդանանց տօնին, Սլիվէնի և փոքրիկ հանգանակութիւն մը բրեր է ինպաստ յեղափոխութեան։

շարունակենք տալ, անոնց հազարներէն կանցունենք։ Կը յուսամ որ հայրեր ու մայրեր, եղբայրներ ու քոյրերիմ առաջարկը ետ չէք ձգեր և ամէն մի անձ իր սրտէն բխածը թողուլիրէ իր խղճալի, ցաւալի, ազգէն համար։

Ով երիտասարդութիւն, եկէք ձեռք ձեռքի տանք. և մեր խեղճ ազգին օգնե՛նք, օգնե՛նք և օգնե՛նք։

Մինասեան Ա. Մաշատուրեան

Նախկին աշակերտ Սիլիվէնի դպրոցի Վանքի

ՎԱՐԴԱՆ ՁՕՐԱՎԱՐ ԹԷՕ ԶԱՐԹՆՈՒՄԻ ՆՇԱՆՆԵՐ

Այս տարի առաջին անգամն ըլլալով Սուլինայի մէջ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Վարդանանցը։ Գովելի է տեղւոյս երիտասարդութեան ներկայ քայլը, որովհետեւ կրցաւ համերաշխութիւն ունենալ ուրախութեամբ տօնելու մեր ազգին հին, ախոյեաններուն յիշատակը։

Եկեղեցին զարդարուած էր հետեւեալ կերպով։ Աւագ խորանին առջեւ կը տեսնուէր քաջն Վարդան, իրեն երկու կողմերը Հայկ և Արամ, վրայի կողմը «Նշանակք Հայաստանի». միւս երկու խորաններու առջեւ Լուսաւորիչը և Հայաստանի փառքը։ Պատարագը դեռ չը վերջացած քահանան բացատրեց օրուան հանդէսի նշանակութիւնը, աւարտումէն յետոյ ուսուցիչ պարոն Մ. Խիթարեան խօսեցաւ։ Մոռցանք ըսել որ գրուած էին և Ռումանիոյ թաղաւորին, թագուհուն և մեր ժամանակակից յեղափոխական հերոսներու և ազգային գործիչներու պատկերները։ Երկու փոքրիկ օրիորդներ Եսայեան և Խաչիկեան Հայ Գուսանի սիրուն կըտորներէն արտասանեցին յաջողութեամբ։ Երգուեցան քանի մը երգեր. ուրիշներ ալ արտասանութիւններ ըրին. ժողովուրդը եկեղեցիէն մեկնեցաւ յուզուած ու գոհ սրտով. որովհետեւ առաջին անգամն էր որ այս մեծ տօնը այսպէս վայելուչ ու կրթիչ կերպով կը կատարուէր։

Կը շնորհաւորենք հանդէսի նախաձեռնարկ եղողները և կը փափաքինք որ ազգային մեծ տօները միշտ այսպէս տօնուին, որովհետեւ ժողովուրդը իր մեծ նախորդներու հետ ծանօթանալով անկէ լաւ օրինակներ պիտի առնէ դէպի իր ազգը պարտաճանաչ գտնուելու համար։

ՎԱՀԷ

13 փետր. Սուլինա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատ. խմբագրութիւն։

Կը խնդրեմ հաճէիք թերթիդ մէջ հրատարակել հետեւեալ հարցումը, որուն պատասխանուելով նաև հրապարակաւ ձեր կողմէ, գոհացումը տուած պիտի ըլլաք՝ մեզ հետ բազմաթիւ համակիրներու փափաքին։

«Ի՞նչ է յեղափոխականի մը կոչումը» «իր ամէն մանրամասնութիւններով» ձեր պատասխանները պիտի կոչուին ըլլալ մեր ուղղիմը. որոնցմէ կը յուսամ օգտուիլն նաև շատ մը յեղափոխական կոչուածներ ալ։

Ընդունեցէք բարեւներս

Դանիել Հացագործեան

27 փետր. 1903

Գահիրէ

ՌՈՒՍԱՍ ԿԸ ՊՍՏՐԱՍՏՈՒԻ

—o—

(Մասնաւոր նամակ մը խաղուած)

Ի՞նչպէս է մակեդոնական հարցի իսկական դրութիւնը։ Ռուսաստանը իր սպառնալիքների հետ միասին ամէն կերպ պատրաստ է հէնց այսօր պատերազմի դուրս գալու, եթէ միայն կարիք լինի։

15դ. դիվիզիան ամբողջապէս, ոտքից գլուխ պատրաստ է։ Վագոնց տպաներին բաժանված է նոյն իսկ ռուս—տաճկական բառաններ։ Պատրաստ են նոյնպէս հրացանաձիգ գունդերը, որոնք ի բենց լաւ հրացանաձգութեամբ ռուսական զօրքերի մէջ առաջնակարգ տեղ են բռնում։

Այդ գնդերը կազմակերպված են այնպէս որ թէ զինուորները և թէ գնդերը շատ թեթեւ լինեն որպէսզի իսկոյն, պատերազմի առաջի նշանը տուելուց յետոյ, արագութեամբ ասպարէզ դուրս գան։

Ինչպէս երեւում է պետութիւնները իրանք էլ չեն իմանում թէ ի՞նչ կարող է տեղի ունենալ վաղը և պատրաստվում են ամեն պատահականութեան դէմ։ Ռուսաստանում գրաքննիչը թոյլ չէ տալիս գիտնալու իրերի իսկական դրութիւնը. նամանաւանդ մեր հարցի մասին ռուս լրագրութեան մէջ ոչ մի խօսք չկայ։

Տարագիր

Սեւ ծովի ափերէն

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

—o—

Ինպատ Ագդ. Երկսեռ վարժարանաց պարահանդէսի կարգադիր մասնախումբս կը փութայ իւր խորին շնորհակալիքը յայտնել արգոյ հասարակութեան որ իւր ուշակցութեամբ մեր նպատակը քաջալերելով արդիւնաւորեց զայն։

Նոյնպէս Համեսաուհի Օրիորդաց Ծիրուհի Շ. Տավուտեանի, Իսկուհի և Զապէլ Նորիկեան քոյրերու, Ֆիլոմէն Ն. Քէսատանեանի և ազնիւ պարոն Մարտիրոս Յովհաննէսեանի որք իրենց բարի և գովելի ջանքերով արդիւնաւորեցին պարահանդէսի հասոյթը, ինչպէս նաև այն ազնիւ անձանց որք սիրայօժար՝ սրահը պճնակարգելով գոհ թողուցին ներկաները։

Կարգադիր Մասնախումբ

Վառնա, 24 փետր. 1903

Նոյն մասնախումբը մանրամասն հաշուեցուցակ ղրկած է հրատարակելու համար, ուրկէ կերեւի թէ պարահանդէսը հասոյթ տուած է 1052, 5 լէֆ որմէ ծախսուած է 200 ֆր. 55 սնթ. նուագախումբի, վիճակահանութեան իրերի, և այլն մանր մունր ծախքերու համար։ Ուրեմն զուտ հասոյթ մնացած է 851 ֆր. 40 սնթ. այսինքն շատ աւելի «Իրաւունք»ի խմբագրի կարծածէն և քիչ պակաս անցեալ տարուան պարահանդէսէն։ Շնորհակալութեան և քաջալերութեան արժանի են Հոգաբարձութիւնը և կարգադիր Մասնախումբը։ Զը պէտք է մոռնալ որ այս տարի Վառնայի հայ հասարակութիւնը կարճ միջոցին մէջ բուական զգալի գումարներ տուաւ Կովկասի զաղթականներուն և հայ. յեղափոխական Դաշնակցութեան։

Խմբագրութիւն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Թուրք կառավարութիւնը ռուս և աւստրիական կառավարութեանց տեղեկագիր մը տուեր է Մակեդոնիոյ մէջ հրոսախմբերու կրկին երեւան գալու մասին։ Ռուսիա և Աւստրիա պատասխանած են որ առանց զօրքերուն թիւը շատցնելու կրնան հրոսախմբերը ջնջել, ատոր հետ մէկտեղ պէտք է որ ալպանացիները զինաթափ ընեն։

— Պոլսոյ իտալական դեսպանի զինուորական կցորդը Թուրքիոյ եւրոպական նահանգները ճամբորդելով, կը յայտարարէ որ ժողովուրդը բոլորովին խաղաղ է։

— Կառավարութիւնը պաշտօնապէս կը հերքէ քանի մը լրագիրներու հրատարակած լուրերը, ըստ որոնց ալպանացիներու և Թուրք զինուորներու միջեւ արիւնալեղ ընդհարումներ տեղի ունեցած էին։

— Սուլթանը իրատէսով մը հաստատած է Կոնեա-էրժիրին երկաթուղին գծի պայմանագրութիւնը։

——

ՊՈՒԼԿԱՐԻԱ—ՄԱԿԵԴՈՆԻԱ

Պատերազմական նախարար Ժէնէրալ Փափրիքով իր պահանջած վարկը մերժուելուն համար հրաժարական տուաւ։ Բայց կը ենթադրուի որ իշխանը այդ հրաժարականը ընդունած չէ։

Կառավարութիւնը կը շարունակէ խստօրէն արգելք հանդիսանալ Մակեդոնացի գործիչներուն։ Սարաֆովիտներու նախագահ ինժինէր Սթանիչէֆ, որ նոյն պէս ձերբակալուած էր, 80000 ֆրանքի երաշխաւորութեամբ ազատ արձակուած է։

—Հաստատ աղբիւրէ կիմանանք որ Մակեդոնիոյ մէջ Սարաֆովիտները և Զօնչէֆները միացած են։

ՋՈՒԻՑԷՐԻԱ

Ժնէվի Վիրթօրիա Հալլին մէջ Հայ Ուսանողական Միութեան նախաձեռնութեամբ և գուիցերիական դաշնակցութեան նախկին նախագահ Լաշէնալի նախագահութեամբ մօտ երկու հազար քաղաքացիներու ներկայութեանը գոնֆէրանս մը տեղի ունեցեր է հայկական և Մակեդոնական խնդիրներու մասին։

ՖՐԱՆՍԱՑԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ ԼՈՒԻ ՆՈՒԱՌԻ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈԿԸ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ

Առաջին մասը լրացաւ

Երկրորդ հատորը սկսաւ հատարակուիլ

Ամէն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան կելլայ (մէկ հատորի մէջ) եւ ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ։

Իւրաքանչիւր մասին բաժանորդագինն է՝ Վառնայի համար 1,25. ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի՝ 1,50. իսկ ամբողջութեանը բաժանեգինն է, Վառնայի համար 2,50. եւ Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանտիմ։

Այն քաղաքները եւ կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք միայն մէկ հասցէի տէն չարաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի ղրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի ղրկուի փոստի ծախքը հրատարակչին վրայ է։

Փափաղողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝

imprimerie Orientale, Onnik Parseghlan Varna

Դրամի փոխարէն նամակագրոշմ ալ կ'ընդունուի։

——

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна